## ՀԱՆԳԻՍՏ
## ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՈՍԿԱՆ ՔԱՀԱՆԱ ՇԻՐՎԱՆՅԱՆԻ
## (1908—1976)



1976 թվականի մարտի 20-ին ի Տեր հանգչաւ Արարատյան թեմի Հոկտեմբերյանի շրջանի ս. Դավիթ եկեղեցու տ. Ոսկան քհն. Շիրվանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1908 թվականին Իրանի Սպահանի շրջանի Նամակերտ գյուղում: Ավարտել է տեղի ութամյա դպրոցը և վաղ հասակից հաճախել իրենց գյուղի եկեղեցին՝ մասնակցելով ժամասացություններին:

1965 թվականին, մեկ տարով, սովորել է Նոր Ջուղայի հոգևոր դպրոցում և ապա 1966-ին, ձեռնադրվելով քահանա, պաշտոնավարել իր ծննդավայրում՝ Նամակերտ գյուղի եկեղեցում: Ապա, երկու տարի հետո, վարել է շրջանի գործակալության պաշտոնը:

1971 թվականին ընտանիքով ներգաղթել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Հոկտեմբերյան քաղաքում:

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի տնօրինությամբ տեր հայրը նշանակվել է ս. Դավիթ եկեղեցում որպես ծիսակատար քահանա: Հայրենի հողի վրա տեր հայրը հինգ տարիների ընթացքում վայելել է շրջանի հավատացյալների ջերմ հարգանքն ու սերը՝ որպես հավատավոր ու ազնիվ հոգևորականի:

Մարտի 21-ին Էջմիածին քաղաքի ս. Աստվածածին եկեղեցում, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի նախագահությամբ, կատարվում է հանգուցյալի վերջին օծման արարողություններն ու թաղման կարգը:

Հանգիստ տ. Ոսկան քահանայի ոսկորներին: